




ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 56

ՕԳՈՍՏՈՍ 4/17 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի † Օգոստոս 4/17 † Թիւ 56

ՕՆՈՒՆՃԸ ՊԻՈՍ ԲԱԲԱ ՀԱԶՐԵԹԼԵՐԻ

1903 Օգոստոս 4 իւլէ — 1912 Օգոստոս 4

Կերիյէ տօրու պիւր արքայ — Եվկլիստէն խապեր վերէն պիւր բօրքուկալ սեփիւրի:— 1903տէի հալ վէ մէվկի:— Բարալար հազարաքր նապր ժարգը սուրէթլերէ այնի խուսուս իչուն, այնի մագաս իչուն չալբերլար:— Օնուննր Պիոսըն վագիմէի մախսուսէսի:— Բարալըգ մագամը էրէմիմին կիթսիմէն քեզաեիւս էսէն նուժուզ վէ քեսիւրի:

Գիւրսիւի չէրիֆ նէզտիւնտէ պուլուռնան պիւր ճիւմլէ սիւֆէրա 1903 Յուլիս 25տէ, օն իւչիւնճիւ Լէօն Բաբանըն վէֆաթընտան տօլայը օ վազըթ Գիլիսայը Շէրիֆին պաշ գամէրլէնկի օլան Գարաինալ Լուիճի Օրէլիա վասիթասըլա Գարաինալար մէճիսինէ պէյանը թաղիյէթ էթմէք իւղրէ միւչարլիյէին հուզուրընա չըգմըչարտը: Հէյէթի սիւֆէրանըն էն գըտէմլիսի պուլուռնան Բօրթուկալ սէֆիւրի Պարոն Մարթէն տ'Անթա սէօզէ պաշլայարագ «Օն իւչիւնճիւ Լէօն Բաբա հազրէթլէրին երւքսէք ֆաղիլէթլէրի վէ տէրին պասիւրէթի թարիսի ալէմտէ միւնէվլէր պիւր էսէր պրագաճագտըր... հէյէթի սիւֆէրա գավիէն իւմիս

էտէրէր քի, ձէնապը Հագգ քէնտի իւմի իւահիսի վէ լուծֆը րահմա-
նիսի վասիթասըյլա Գարտինալար մէճլիսի միւհթէրէմինին ֆիքրինի
թէնվիւր վէ իւհամ էյլէյէճէք վէ պու սուրէթլէ Գիլիսանըն բարլագլը-
ղընը մուհաֆագա հէր տիւրլիւ աղրագ վէ հէվաի նէֆասնիէնին թէսքին
վէ վիճտանլարըն րահաթլըղընը թէմին իչուն իյճապ էտէն թէրպիւրէրի
խթիմալ էյլէմէք իւզրէ տալէթ օլունմըլ օլան պիր Բաբա ինթիխապը
միւլէսսէր օլաճագ տըր» տէտի :

Տահա ազ էվվէլ թէրքի տաղտաղայը հայաթ էյլէմիլ օլան Բաբա-
նըն գատըր ալիսինի, օնուն վէֆաթընտա Գրիսթանլըղըն պուլունտըր
հալ ու մէվգիի վէ օնա խալէֆ օլաճագ բէյիսի էքպէրտէն ինթիգար
օլունան վազլիֆէյի պունտան տահա ազ քէլիմէլէրլէ վէ պունտան տահա
զիյասէ վազլիս սուրէթտէ իֆատէ էթմէք գապիլ տէյիլտի :

Օն իւլիւնճիւ Լէօն Բաբա հազրէթլէրինին զէմանը իտարէսի, Գի-
լիսայը վէ պիւթիւն ալէմի բէյնուգեապ էտէն միւնէվվէր պիր Բաբա-
լըգ օլմուլ օլտուղընա, էն տիւլմէն սաֆֆլար արասընտա պուլընան
եիւքսէք տէհալար պիլէ շէհատէթ էտէրլէր : Պախուսուս օնուն զէմանը
իտարէսինին իւք տէվրէսի էնանսընտա, հագգընտաքի հայրէթի ումուլիյէ
հիսսիյաթլարը հէր թարաֆտան իզհար օլունուրլարալ : Օ Բիրի միւհթէրէմ
պիր չօգ զէման — պիւթիւն գուվվէթի միւնհաղըն քէնտի վազլիֆէ-
սինտէ վէ իճրասընա միւվէֆֆագ օլտուղըն նուֆուլընտա օլան պիր
Բաբա իչուն միսլի կէօրիւլմէմիլ — մէսէրրէթին զէվգինի ալմըշտըր,
էֆքեարը ումուլիյէնին վէ սէրալարըն քէնտինէ տօղրու թէմէյեիւլ
էթտիյինի վէ քէնտի վասիթասըյլա տա գաթօլիքիլին թալիմաթը
ալիյէսինէ, վէ պախուսուս քիւլիւքլէր վէ գաիֆլէր հագգընտա, Գրիս-
տոսըն մէհապպէթինէ միւվաֆըգ օլան, շախսի վէ իճթիմաի պիր մօրա-
լա տօղրու մէյլ էյլէտիյինի կէօրմիւլտիւր : Ֆագաթ օ պէօլիւք Բաբա-
նըն սօնրաքի սէնէլէրի գահմէթլի վէ թէճրիպէլի օլմուլտըր : Օ գատար
թէշվիգաթ վէ մուսվէնէթինէ մագհար օլմուլ օլան իլմ, հէր շէյէ եա-
լընըգ քէնտի քեաֆի տիր զոնն էտէճէք գատար իլէրիյէ կիթմիլ բէլա-
թիէնլիքտէն միւնչաիպ օլան եէնի պիր թարիգ, խալըն ագըլը համա-
գաթընըն եէրինէ ինսանի գուվվէթլէրի կէչիւմէք իսթէմիլ վէ Ալահըն
լուծֆունը ասրլ քէնտի ալլահանի վէ էօթէտէն պէրի արանըլան մէն-
պալարընտան տիշարտա թէհարրիյէ գալգըլմըշտըր : Նեվի պեշե (Huma-
num genus) քէլիմէլէրիյէ իսթիտա իտէն թահրիրաթը ումուլիյէ գար-
չըսընտա պաշ էյմիլ օլմայան ֆրրգա, հիյէքեարլըգլա քէնտի մագաստ-
լարընա ումուլըն խէլասընա խըտմէթ սիւսիւ վէրէրէք, նէթիճէսի բուհ-
պանը թարտ վէ թէպիտ էթմէք, Գիլիսայը Հիւքիւմէթտէն այլըմագ
կիպի անվալը թէվլիտ էյլէյէն խըյանէթէ թէքրար ճիւրաթ էթմիլտիր :

Օն իւլիւնճիւ Լէօն Բաբա հազրէթլէրի (Տօգուզընճը Պիոս Բաբա-
տան քէնտիսինէ օլտուղըն կիպի) վէֆաթ էթմէսիյէ՝ խալէֆինէ, ումու-

մին նազարընտա իրթիֆա էլէմիշ օլան, էյիլէրին նիհայէթսիզ մուհա-
պէթի, ֆէնալարընտա էօլլիւսիւզ զայզ ու ատավէթիյլէ մուհաթ պու-
լունան մագամընը թէրք էթմէքլէ պէրապէր, խաֆիտէ իլէյէն պիր
գուվվէթէ մարուզ գալմըշ, տախիլի միւնազաալարա թութուլմըշ վէ
չօգ կէչմէտէն բաթլայաճագ օլան սիյասի թէհտիտլէր գարչըսընտա պու-
լունուհօր օլան պիր տէ ալէմ պրագըթօրտը:

Պինաէն ալէյ, Եէնի Բարանըն վազիֆէսի «Բիլիսանըն բարլագ-
լըզընը մուհաֆազա, հէր տիւրլիւ աղրազ վէ հէվաի նէֆսանիյէյի թէս-
քին վէ վիճտանլարըն բահաթլըլընը թէմին էթմէք» իպարէլէրիյլէ բէք
միւքէմէլ սուրէթտէ չիզիլմիշ պուլունույօրտը:

1903 Յուլիս 31 դարտինալլարըն Գօնգլավ մէճլիսինտէ Ճէնապը
Հագգըն միւնթէխէպի, Վենետիկ Պատրիարքը դարտինալ ժօղէֆ Սար-
թօ հագըթէթլէրի օլմուլտըր: Տահա անճագ օն սէնէլիք պիր Գարտինալ
պուլունուտըզընտան խտարէի ալէմէ ազ միւսթաիտ կէօրիւլիւյօրտը: Բի-
լիսանըն խտարէի ումուսիյէսինէ պիլֆիլի իշթիրագ էթմիշ օլմատըզըն-
տան Ռօմատան ուզագ վէ Չօպանը նասպ օլունուտըզը միւսթէլիֆ թեմ-
լէրին ճէմաաթ վէ բուհպանընա կէրէք քէլամը վէ կէրէքսէ իպրէթիյլէ
վազ էթմէք վազիֆէսիյլէ մէշղուլ պուլունույօրտը: Թեմականլարընը
հագիգաթը հալտէ պիր նիմուհէսի, պիր տօսթը պիր պապասը վէ Պատ-
րիարք (Patriarche) քէլիմէսինին իֆատէ էյլէտիյի թաթլը պիր մանատա
օնլարըն պատրիարքը, Եանի էվլատ ու անֆատ սահիպի օլան պիր բիրի
միւնթէրէմի օլուպ օնլարըն արասընտա եաշար, օնլարըն մուհապէթինի
կէօրիւր վէ, հայաթ վէ մէմաթլարընտա մուհապէթլէ օնլարը թագիպ
էտէր պիր պէօյիւք պապա իտի:

Ումուսմըն նազարը, ալիմլէրին թէվէճճիւհիւ, սիյասէթի բուհա-
նիյէ վէ խարիճիյէ մէհէրէսինին բաղպէթի, պէշէրիյէթին խայրընա
թէշնէ օլանլարըն արզուսը Գարտինալար մէճլիսինին մէշուր վէ նամ-
տար պազը ազալարընա միւթէվէճճի հտի, ֆագաթ Ալլահ օնլարը ին-
թիխապ էթմէմիշտի, օնըն միւնթէխէպի պաշգա թարաֆտա իտի:»
«Հիֆսէքիսէն պահս օրունազ, Էա՛ Ալլահ»: Ճէնապը Հագգ ալտանմատըզը
կիպի, Բիլիսանընտա գաթիէն պրագմազ, Ինսանըն սէֆիլ հէվաի նէֆ-
սանիսի օնուհ Հիքմէթի սիւպհանիյէսինէ գաիմ օլմայը իսթէմէտիքճէ,
հաթթա պաղէն օ վագըթ պիլէ, Ալլահ զէմանընա կէօրէ Բիլիսանընա
բէյիսի էքպէր վէրիւր: Պիր վագըթ տիւնեայը Եէտը իսթիլայարընա կէ-
չիւմիշ օլուպ տա հէր թարաֆտա «Արթըգ Բիլիսանըն ֆիքիլլէրիմիզի
խտարէ էյլէմէսինի, իճթիմաի վէ սիյասի իշլէրիմիզէ նէզարէթ էթմէ-
սինի իսթէմէյիզ, արթըգ պիզ սէրպէսթիզ, վասըյա ինթիյաճըմըզ Եօգ-
տըր, Բիլիսանըն թահրիրաթը ումուսիյէլէրի (Շըշաբերական) աֆօրօզ-
լարը պիզիմ իչիւն հիւքիւմսիւզ տիր» տէյի նիտա էյլէյէն պիր ալէմէ իւ-
թիլալըն հէր նէվինէ գարչը իլանը հարպ էթմէք իչուհ միւսարի (lutteur)

Տօգուգունճը Պիոս Բաբայը վերմիշտիր։ Միւշարիւէյն եալանճը ալիմէ-
րին ալտատըճըլըզլարընը վէ Բիլիսա տիւշմէնլէրինին խաֆի մագսատ-
լարընը զահիրէ չըգարմագ խուսուսընտաքի սէպաթը եիւզիւնտէն ճիս-
մանի հիւքիւմէթինի զահպ էթմիշտիր։ Ալլահ, ազլը պէշէր իւզէրին-
տէքի թէֆէվվիւզինէ պէթէքրար սահիպ օլմագ, հուգուգը ումուճիյէ
վէ խուսուսիյէնին հիյնի իսթիմալլնտա վիճտանը թարիգը միւսթագիմէ
իւշատ էթմէք վէ պիլ իլթիզամ քէօրլիւյիւ իիթիյար էյլէյուպ տէ գա-
պին պիր սուրէթտէ նանքէօր պուլունան էվլատլարընա գարըլ Րօմա
Բաբալարընըն իպրագ էյլէտիյի հիլմ ու միւլաեէմէթի թէճէլլի էթտիր-
մէք իյուն օն իւշիւնճիւ Լէօնըն չախսընտա Բիլիսայա պիր Մուաքիմ
վէրմիշտիր։ Եինէ օ Ալլահ Օնունճը Պիոսըն Բաբա ինթիխապըյա քէն-
տի Բիլիսսընա պիր Մուսալլի (réformateur) իհսան էյլէմիշտիր քի,
ինհիրաֆ էյլէմիշ օլան եօլլարը տիւզէլթէճէք, Բիլիսայա հէնի պիր ին-
թիզամ վէրէճէք վէ սալիմ վէ էմին եօլլարտա հէրքէսէ տէլիլ վէ բէհ-
պէր օլաճագալը։

Օնունճը Պիոս Բաբա հագրէթլէրի թամ վագթընտա կէլմիշտիր,
պաշգա պիր թարիխտէ օլսայտը, եարտըղընըն գապիլ իլ իճրա օլուպ
օլմատըղը թէսալվուր էտիլէմէյէճէքտի. Գէնտինին թէշէպիւսիւնտէն
եալընըլ չիգագլար, իսեանլար պէքլէնմէյէճէք, իլլա մութլագա հու-
սուլա կէլէճէքլէրտի։ Պիլագիւ, պուշարա մուգապիլ պիզ պու կիւն
նէ՞ կէօրլիւյօրուլ։ Մա էլ իֆիթիխար տէյէպիլիլիլիլ քի Բաբալըգ էֆ-
քեարը ումուճիյէ գարըլընտա, արթըգ էսկի սիւհալարլա հիւճիւմ խտի-
լէմէյէճէք պիր եիւքսէքլիյէ իթիլա էյլէմիշ, զարագա տէլալէթ էտէն
խաթիհա վէ ինսանի շէյլէրին ինգիւրագը միւհսսիֆինէ ուղրամըլ օլան
հէր խուսուս հագգընտա իսթիհգարըն պիր նիշանէսի պուլունան լագայ-
տի՝ օնա գարըլ աճիլ գալմըլտըլլար։ 1903տէ նէ պիր միւթէքէպպիր
հիւքիւմտար վէ նէ տէ պիր Յրանմասօն մէճիսի պուլունամըլտըր քի
1800 թարիխլէրինտէ սէօյլէնիլէնի թէքրար էտէպիլսին. «Եհսինճի Պի-
ոսան սօնրա օնըն եհրինե ախր խաշիֆ կեթիրմիյի մեհ իսհնէյիլ»։ — Բա-
բալըգ մագամը ալիսինն՝ պիր իսթիլալ կիւնիւ տէվրիլէճէք վէ եէրինէ
պաշգա պիր միւզէպղէպ խտարէնին կէշիլիլէճէյի պիր խանէտան օլմա-
տըղը՝ գայտը թաստիգտէն վարէսթէտիր։

Շիմտի արթըգ աշիքեար տըր քի օնուն ալամէթի նէ քէնտի մէ-
մալիքինին վիւսաթըյա նէ քէնտինի իհաթա էտէն Բրօթօգօլ տէպտէ-
պէլէրիլլէ վէ նէ տէ սայիր տիւնեէվի հիւքիւմէթլէրին հիմայէ վէ միւ-
տաֆաալարըյա մահտուտ տըր։ Շիւպէն իսթէմէլ քի Բիւրսիի շէրիֆ
քէնտի վաղիֆէսինին իյֆասլնա եարայըլը օլան պու մուսավիլէրի իս-
թիհգար էյլէմէտիլի կիպի, պիր իմքէրաթօր վէ եա գրալ թարաֆըն-
տան վէ հախօտ ճիւհուրիլէթլէ իտարէ օլունան հիւքիւմէթլէր իլէ տէ
գաթը միւնասէպաթ էյլէմէք իսթէմիշ. ֆագաթ պիր ճէպը վէ եա

չիտտէթ երեզիւնտէն պունլար չէքիլէճէք օլուրլարսա, գըրգ սէնէլիք գէմանըմը թարիխին չէհատէթ էթտիյի իւզրէ, օնլարտան վազ կէչմէյի պիլիւր վէ պիր սէրայըն հալը ինզիվասընտա վէ գանունը զամանըն հազգընտա ըէվա կէօրտիւյիւ պիր ինսիրատ իչինտէ օլտուղը հալտէ պիլէ տիւնեանըն իտարէսինտէ տէվամ էյլէր:

Պունըն սէպէպի շու տըր քի, Բաբալար մահպուս իսէլէրտէ, օնլարըն քէլամլարը մահպուս տէյիլ տիր, հիւրր տիւր, ճէսուր տըր, գուզվէթլի տիր, հէր թարաֆտա թազիմ պուլուր վէ իթաաթ կէօրիւր: Ինսանճա սէօյլէմէք իսթէյէճէք օլուրսազ, պու հալ Տօգուզընճը Պիոս վէ օն իւչիւնճիւ Լէօնըն իրազընա միւզէֆֆազ օլտուզլարը զալէպէլէրին հուսուլա կէթիւրտիյի նէթիճէ տիր: Տօգուզընճը Պիոս վէ օն իւչիւնճիւ Լէօն Օնունճը Պիոսա չըղըր աչմըչլար տըր, վէ օնունճը Պիոս իսէ Հիքմէթի իլահիյէնի քէնտիսի իչուն սազլամըլ օլտուղընը եէտինճի Գրիգոր, Տօգուզընճը Գրիգոր, պէչինճի Սիքստոս վէ պէչինճի Պիոսըն եարտըղը իւզրէ պաշա չըգարմըլ տըր:

«Քրիստոսըն վէքիլի տիւնեզվի սիւահլարսան մահրում իսէ տէ, օնուն քէլամլարը ալլանսի գուտրէթէ մալիք տիրլէր, օ քէնտի տիւչմէնէրինին գալէլէրինի տէվիրմէք, ինսանի ֆիքիրլէրի պէր հէվա էթմէք. մուհաֆըղը պուլունտըղը թալիմաթը մուգատտէսէ էմանէթինէ գարչը եիւքսէլմէյէ գալգըշան հէր եիւքսէքլիյի վուրմազ, հատտը թէճալուզ էյլէյէն հէր ազլը հագիգաթ ըապըթալարըյլա մէրպուլ վէ Քրիստոսըն աղըլընտա սազլամազ վէ, մէճպուր օլտուղը թազտիրտէ, թէանսիւտ էտէն իթաաթսըղըլը թէտիպ էյլէմէք իչուն քէմալը հիւրլիյէթլէ քէլամընը գուլլանապիլիւր»:

Ձանն էտէրսինիզ քի 1913 Օգոստոս 4 տէն պէրի օնունճը Պիոս հազրէթլէրինին եիւքսէք ֆիքրինէ, գօրգուսըլ իմանընա վէ ալիճէնապ գալպինէ շու պալատէ թէրճէմէթէն տէրճ էթտիյիմիզ էսքի պիր մուհարրիբին ֆըգրալարը Բաբալըղը խիւլասա էյլէմիչլէր տիր: Իլհամլա եազըլմըլ օլան պու սաթըրլար մուխթասար պիր թապլօ իւզէրինտէ օնուն մահիյէթինի թէչքիլ էտէն Ֆիզիօնօմիսինի թասվիր էյլէտիքտէն մատա, պիթմէք իւզրէ պուլունան շու տօգուզ սէնէլէր գարֆընտա օնըն եարմըլ օլտուղը պէօյիւք իչլէրի տէ կէօպէթիյօր: Քիլիսանըն, զահիրի պիր մաղլու պիյէթ սուրէթի ալթընտա սախի Ալլահըն պազուսընա իսթինատ էտէրէք նասըլ զալէպէ էյլէտիյինի, էվլատլարընըն, հիւքիւմֆէրմա օլան հէր զուլմէթտէ, իյֆա օլունան հէր միւչքիլաթ վէ ֆուրթունայա ըազմէն եինէ քէնտինէ ֆարթը սատազաթ վէ գայտը էմիյէթլէ մէրպուլ պուլունմալարը իճապ էտէր օլտուղընը տա թարիֆ էյէր:

ՍԱՄԲԻԵԹՐԻՆՕ

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՊԼԱՆՇԱՐԻ (Համառոտութիւն)

Ա.

Վախցի՛ր վրժխնդի՛ր Աստուծմէ եւ այն ամէն բանէ, որ զինք կը վեճացնէ : Այդ է առաջին փայլն, որ իմաստութեան կ'առաջնորդէ :

Վախցի՛ր վրժխնդի՛ր Աստուծմէ եւ այն ամէն բանէ, որ զինք կը վեճացնէ :

Մարդուն կարեւոր ամէն գիտելեաց մէջ, առաջին և ամենակարեւորն Աստուծոյ գոյութիւնն է : Այս գոյութեան համոզումն հաստատուն և անփոփոխ հիմն է, որուն վրայ կը կենան բարքերն, առաքինութիւն, ուղղութիւն և ամբողջ մարդկային ընկերութիւնն : Մարդկանց սրտին մէջէն հանէ՛ Աստուծոյ գաղափարը, և պիտի տեսնաս թէ աշխարհք ինչ պիտի դառնայ : Այո՛, կայ ամենակարող Աստուած մը, ամէն բանի աւերիչ, գերազոյն պաշտպան կարգաւորութեան, վրէժխնդի՛ր յանցանաց և վարձատրիչ առաքինութեան : Իւր ամէն կատարելութեանց մէջ էականապէս անհուն ըլլալով, Աստուած ըլլալէ պիտի դադրէր, եթէ առաքինութիւնը առանց վարձատրութեան և մղութիւնը առանց պատժոյ թողուր :— Իւր արդարութեան իրաւունքները միշտ չգործադրեր այս կենաց մէջ, իւր իմաստութեան արժանի պատճառներու համար, բայց մեծապէս անխնամ պիտի ըլլայ եթէ մէկը յանդգնէր յուսալ թէ անպատիժ պիտի մնայ : Եթէ Աստուած նոյն ընդ նոյն վարձատրէր ամէն բարի գործերը, և պատժէր, այն ինչ գործուած յանցանքը, չպիտի խափանէր արդեօք այն ազատութիւնը, որ առաքինութեանց և արժանացուած վարձատրութեանց սկզբունքն է, որ ազատութիւնն միեւնոյն ժամանակ Աստուծոյ արժանաւոր մեծարանք ընծայել կու տայ մեզի : Եթէ այս կենցաղիս կարճ միջոցին մէջ, իրեն հաճոյ կը թուի զմեզ մեր խորհրդոց առաջնորդութեան թողուլ. այս անոր համար է, որովհետեւ իրեն աւելի փառք է ծառայութիւն ընդունիլ և պաշտուիլ ազատ և բանական արարածներէ, քան թէ այնպիսի էակներէ, որոնք վարկի ենթարկուած ըլլալով մեր հունձքերը հանունցնող արեւէն աւելի առաքինի, և զանոնք փճացնող կարկուտէն աւելի չար պիտի չըլլային :— Բայց եթէ Աստուած ժամանակ մը ազատութեան զեղծումին կը համբերէ, սակայն միշտ չարիքէն բարիք հանել գիտէ : Մինչ առաքինութիւնն հեծելով կը զտուի և կը փորձուի, և որ անոր արդիւնքները և վարձքը կ'աւելցնէ, յաղթանակող և յաջողութիւն վայելող չարագործն

ապալիսարելու հանգիստ ժամանակ ունի, և չկրնար վերագրել եթէ ոչ ինքն իրեն այն սոսկալի թշուառութիւնները, որոնք իրեն կը սպասեն, եթէ, իրեն խղճին ձայնին հակառակ, կը շարունակէ իրեն յանցանաց չափը լեցնել, զանոնք իրեն հետ գերեզմանէն անդին տանելով: Եւ չտարակուսինք բնաւ թէ Աստուծոյ արդարութիւնն իրեն արժանի յանցանաց համեմատեալ կերպով չգործադրուիր: Դժոխքը ծաղրող ամպարիշտի մը կ'ըսէին. «Խնչպէս, մարդկութեան դէմ գործուած յանցանքները պատժելու համար՝ մարդիկ այս աշխարհիս մէջ քանէն, արգելանոցներ, տանջանոց անիւներ եւ կրակներ ունին, Աստուծ իրեն համար քան մը չվերապահնց՝ անարգ մահկանացուներէ գործնք ինքն իւր քարիքներով յիացուցած էր, այնչափ յաճախ եւ այնպէս անարժանաբար նախատուած իւր Աստուծային մեծվայելչութեան վրեժը լուծելու համար:» Եւ արդարեւ ի՞նչ պիտի ըլլային իւր գերագոյն արդարութիւնն և սրբութիւնն, եթէ նոյն անտարբեր աչքով նկատէր չարիքն ու դարիքը, և թողուր անզգամը գերեզմանին անվրդով գիշերուան մէջ բարեգործ մարդուն քով քնանալ:

Չար մարդն, իւր անզգամութեան մէջ երջանիկ, հարստութիւններէ և հաճոյքներէ չըջապատուած, անմեղութիւնը պիտի ընկճէր, ամէն չարիքները պիտի գործէր սպառէր, և իւր գարշելի կեանքը խաղաղութեամբ պիտի կնքէր, մինչ արդար մարդն, հարստահարութեան դո՛ւ, իր կեանքը պիտի անցնէր և կնքէր թշուառութեամբ և արտասուօք: Եւ Աստուծո, որ այս ամէնուն ականատես վկայ պիտի ըլլայ, որ, առաքինութեան դէմ յարուցուած հալածանաց մէջ ինքն իսկ անհունապէս նախատուած պիտի ըլլայ, միթէ յաւիտենական լուութիւն մը պիտի պահէ, և պիտի չըլլայ ուրիշ կեանք մը, յորում իւր արդարութիւնն վերահաստատէ կարգը, փոփոխէ պայմանները, և ամէն մէկուն իրեն գործոց համեմատ հատուցումն ընէ: Այո՛, անտարակոյս, վերջապէս Աստուծո պիտի ելլէ, ինքն անձամբ իր դատը պիտի տեսնէ, և իրաւամբ զայրացած տիրով պէս վրէժ պիտի լուծէ: Պատժելու մէջ անոր համար այնչափ արագ չէ, անոր համար այնչափ դժուարութեամբ իւր բարկութեան առիթները զանց կ'ընէ, վասն զի յանցաւորները պատուհասելու համար իւր առջև ամբողջ յաւիտենականութիւն մը ունի: Ի զուր ամբարիշտն ոչնչանալու յոյսեր կ'երազէ. այն որ զինքն ոչնչէն դուրս հանեց, եթէ հարկ ըլլար, անգամ մ'ալ պիտի հանէր, անոր վրայ իւր վրէժխնդրութիւնը գործադրելու և իւր բարկութեան բաժակը ինչեւ ցմրուր անոր քամել տալու համար:— Իրաւ է թէ, Աստուծո զմեզ կորսնցնելու և յաւիտեանս թշուառ ընելու համար չստեղծեց բայց զինքն անարգելու և արհամարհելու համար ալ չստեղծեց: Այսու ամենայնիւ մենք ատկիւ կ'ընենք կոր, անոր մեր վրայ ունեցած բոլոր խորհուրդները կը փոխենք կոր. հարկ է արդեօք զարմանալ, եթէ ինքն ալ մեր նկատմամբ իւր նախախնամութեան ամբողջ կարգը փոփոխէ:

Եթէ իր գթութեան ժամանակ իւր բարութիւնը և բարիքները
չարաչար գործածենք, պէտք չէ՞ որ ինքն ալ, երբ իւր արդարու-
թեան ժամանակն հասնի, իւր գերագոյն մեծվայելչութեան դէմ գոր-
ծուած անհամար անարգանքները պատժէ:— Որչափ աւելի սարսափելի
ըլլան այս պատիժներն, այնչափ աւելի անոնցմէ սոսկալու ենք, և դո-
ղալու տիրոջմէ մը, որ որչափ կարող, նոյնչափ ալ արդար է: Սակայն,
որչափ ալ տհաճելի ըլլայ ըսելն, որքա՞ն քիչ մարդիկ ատոր վրայ լուրջ
կերպով կը խորհին: Ասոնք մահացու անտարբերութեամբ մը կ'ապրին
իրենց նկատմամբ ամենակարեւոր բանի մը մէջ, անտարբերութիւն մը,
զոր պիտի զգուշանային ունենալ անկարեւոր և չնչին գործերու մէջ,
մինչ անդգամն, որ կը փափաքի որ բնաւ Աստուած չըլլայ, կ'աշխատի
ինքզինք այդպէս համոզելու, և մանաւանդ թէ իրեն պատիւ կը համարի
ինքզինք ատոր համոզուած ցուցնել, ուրիշ շատեր, որոնք հաստատուն
և յայտնի ամբարշտութենէ մը կը խորշին, կ'ուզեն ամենեւին ատոր վրայ
չխորհիլ, և կամ մնալ այնպիսի տարտամութեան մէջ, որ ճշդիւ սահ-
մանելով, ուրիշ բան չէ, եթէ ոչ նուազ գարշելի և աւելի հանգիստ
տեսակ մը անաստուածութիւն: Իրենց աչքերը ծածկող այլ զիրենք չար-
դարացնող քօղը պատռենք: Յուցնենք անոնց աչաց և հոգւոյն գերա-
գոյն էին գոյութիւնը, որ այնպիսի անջնջելի և լուսաւոր տառերով
դրոշմուած է բոլոր արարածոց վրայ, զի ամենապարզ և ամենակոշտ
մարդիկ անգամ չեն կարող զայն չճանչնալ: Սորվեցնենք մանաւանդ
այն հասակին, որ այնչափ քիչ կը խորհի այն բաներուն վրայ, զորոնք
ամէն օր առանց ուշադրութիւն ընելու կը տեսնայ, թէ իրեն համար
որչափ հաճոյական, որչափ նոր, նոյնչափ ալ օգտակար և բարերար խոր-
հրդածութիւններ ընելու: Յայտնենք անոր, բնութեան գլխաւոր հրա-
շալեաց մէջ, տիեզերաց և իւր իսկ Հեղինակը: Զգայարմաց ներքե
իյնալու համար կարի մեծ և կարի կատարեալ ըլլալուն պատճառաւ,
հնա՞ր է արդեօք զինքն իւր գործոց մէջ չնկատել և չճանչնալ: Եւ ար-
դարեւ, երբ գեղեցիկ չէնք մը տեսնեմ, կ'ըսեմ ինքնիրենս, այս փա-
ռուոր չէնքն այնչափ կարգով և ճշտութեամբ ինքնիրմէ չի՞նքուած չէ:
ճարպիկ ճարտարապետ մը անոր յատակագիծը պատրաստած է, և ճար-
տար արուեստաւորներ ատիկա գործադրած են: Անշուշտ պիտի ծիծա-
ղէի այն մարդուն վրայ, որ զար ինծի ըսէր լրջութեամբ թէ, ասիկա
պատահման արդիւնք մ'է, կոյր պատճառ մը, որ պատճառ ըլլալէ չա՞տ
հեռու է, վասն զի ոչինչ է: Ըստ այսմ, երբ տիեզերաց հրաշալի տե-
սարանը կը դիտեմ, այն լուսաւոր գունտերը, որ այնչափ բազմաթիւ
դարերէ ի վեր մեր գլխուն վերեւ այնպիսի վեհութեամբ մը կը հուսկին
այնպիսի ճիշդ և հաստատուն շրջաններով երբ երկրի հիւսնալի արգա-
սաւորութիւնը կը նկատեմ, զոր ժամանակը չէ կարողացած սպառել, և
որ ամէն տարի, միեւնոյն կարգով և կանոնաւոր ճշտութեամբ, իրեն

տարուած խնամոց գինը կը հատուցանէ այնչափ պատուական պողոց և անկոց տրիտուրով, որոնց տեսակներն անթիւ են. երբ իմ շուարած ակնարկներս ծովու անհուն տարածութեան վրայ կը շրջեցնեմ, և իւր խորունկ անդունդներուն մէջ կը թափանցեմ, ուր վիթխարի մեծութեամբ այնչափ զազաններ կը խայտան, և ուր անդադար այնչափ ուրիշ ձուկեր կը դոյանան, որոնց շատերն մեր օգտին համար անսպառարգաստուրութիւն մը ընդունած են, երբ վերջապէս մարդկային մարմնոյ հրաշալի կազմածը կը քննեմ, որ մեքենական յօրինուածութեան Գլուխ Գործոց մի է, այնչափ գեղեցիկ իրաց հանդէպ, բարեպաշտ հիացմամբ մը լեցուած, կը գոչեմ. ստուգիւ այս ամէն հրաշալիք կը ծանուցանին գերագոյն տէր մը, որ զաշխարհ իւր ամենակարող պօրութեամբն ստեղծեր է, իւր բարութեամբն կը պահպանէ, և իւր անհուն իմաստութեամբն կը վարէ: Ուրիշ ո՞վ ապաքէն կրնար զանոնք գոյացնել, եթէ, գեղեցիկ մեքենայ մը տեսնելով, ոչ ոք կը տարակուսի թէ ատիկա ուշիմ և ճարտար արուեստագէտի մը ձեռքէն ելած չըլլայ, բնութեան գեղեցկութիւնները նկատելով, ո՞վ կրնայ տարակուսիլ թէ, անոնք արարիչ Աստուծոյ և տիեզերաց բացարձակ տիրոջ մը գործերն չեն:— Այսչափ զգալի ճշմարտութիւնները չճանչնալու համար կարի անտրամաբան և կոյր ըլլալու է ստուգիւ: Ամբարիշտն կը պանծայ թէ չկրնար ըմբռնել զԱստուած. և պատճառն այն է որ, զայն իւր ապականած սրտին, քան թէ իւր բանականութեան մէջ կը փնտռէ: Բայց գոնէ իր շուրջը նայի, զայն ամէն տեղ պիտի գտնէ. բոլոր աշխարհ զայն իրեն պիտի ծանուցանէ: Անոր զօրութեան, իմաստութեան և բարութեան հետքերը բոլոր արարածոց վրայ դրոշմուած պիտի տեսնէ. և իւր սիրտն միայն պիտի գտնուի տիեզերաց մէջ, որ բնութեան Հեղինակը չծանուցանէ և չճանչնայ:

Հայրեր, մայրեր, վարժապետներ և վարժուհիներ ջանացէք ներշնչելու երիտասարդութեան, որոնք ընկերութեան և եկեղեցւոյ յոյսն են, Հաւատոյ, Աստուծոյ երկիւղի և սիրոյ զգացումները, որոնք պէտք է որ գծին անոնց առջև այն ճամբան, զոր պարտին ընել այս աշխարհիս մէջ: Կրկնեցէ՛ք իրենց ստէպ Ռասինի այս գեղեցիկ տողերը:

Սրբութեան կամաց նորա ըստորանկեալ դողութեամբ

Երկնչիմ ես ի նմանէ, չիք այլուստեք ինձ երկիւղ:

(Ռասին . Գոթոգիա)

Յիշեցէ՛ք իրենց իմաստունին այս գեղեցիկ առածը:

«Մեծերն, դասաւորներն, եւ հօգօրներն ի պատուի են. բայց ոչ ոք առաւել մեծ է անկէ, որ Աստուծմէ կը վախնայ: Այն որ նուազ ուշիմ եւ գիտուն է, բայց Աստուծոյ երկիւղը ունի, քան ի յարգի է քան զայն, որ մեծ խելք ունի, եւ Բարձրեցւոյն օրհնէր ռեակտիս կ'ընէ: Այն որ Աստուծմէ կը վախնայ, երջանիկ պիտի ըլլայ, եւ իւր մահուան օր պիտի օրհնուի: Այս

յաճախակի խրատք, եթէ օրինակաւ ալ հաստատունն, բոցեղէն նետե-
րու պէս այդ երիտասարդ սրտերուն մէջ պիտի թափանցեն, և անջինջ
տառերով պիտի քանդակուին հոն: — Ասոր չքեղ մէկ օրինակը ունինք
Գաղղիոյ Սուրբ Լուդովիկոս թագաւորին վրայ: Երբ ինքն գեռ մանուկ
էր, Պլանշ թագուհին, անոր կ'ըսէր այն խանդաղատանօք. զոր բնու-
թիւնն մայրերուն կու տայ, և այն վեհանձնութեամբ, զոր կրօնքն իւր
ախոյեաններուն կ'ընձեռէ. Զաւակս, զեզ շաս կը սիրեմ, բայց նախաւե-
ծար կ'ընտրեմ տեսնել զեզ որ առջեւս հոգիդ աւանդես, քան թէ մեկ հասկի
մահացու մեղք մը գործես: Այս խօսքերն այն սուրբ թագաւորին սրտին
մէջ այնքան խորապէս դրոշմուեցան որ, բոլոր իւր կենաց մէջ չտեսան
երբէք զինքն մէկ հատ մահացու մեղք գործել: Եւ այն ինքն մեծ խնամք
ունեցաւ իւր զաւակին յանձնարարելու այս փրկարար սկզբունքը այն
իմաստուն խրատներուն մէջ, զորս մեռնելէն առաջ անոր տուաւ:
«Զաւակս, ըստ այս առաքինի իշխանն, առաջին բանը, զոր քեզի կը սոր-
վեցնեմ եւ կը յանձնարարեմ, ե, որպէս զի ի բոլոր արեւ եւ ամեն բանի
վեր զԱստուած սիրես. վասն զի ոչ ոք առանց ասոր կրնայ փրկուիլ: Լաւ
զգուշացի՛ր անոր անհաճոյ բան մը ընելէն. աւելի փափաքելու եւ ամեն
տեսակ տանջանքներ կրել, քան թէ զինքն վշտացնել:

(Շարունակելի)

Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

Հ Ն Զ Ե Ա Կ

ԱՌ ՍՐԲՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԵՆԱՅԻ

~*~*~

Թող ետ'եր ինձ քեզ յայտնել զիմ սէր, ապաշխարո՛ղ Մագդաղեայ,
Թող այլ ըզբեզ մեծադրուած երգեն ի վնար տասնադեայ.
Ո՛րչափ ի քէն ծագի խախոյս թրուառնեռու մեղապարս՝
Երբ խաչին մօտ արիւնքներկ կուլաս մեղքերդ անհրապարս:

Ուր եւ հնչէ բանն Աւետաց, կենագործող բոլորից,
Պիտի փայլի անմահ յաւեօ բոյդ յիշատակ խրկկայից,
Յորչափ ազիւն Եկրպագեն պաղատագին առ Յիսուս,
Մագդաղի՛նէ՛, անունդ անգամ պիտի խլէ արտասուս:

Զրկնաղագիւտ դու օրինակ դիւցազնաւունջ լաւութեան,
Զգլման արտի, ու երկնասենյ սիրոյ շիպար յաւիտեան,
Դու եւ Փրկչիս աստուածութեան ընդ միտս շեղ ապացոյց:

Թէ չէր Աստուած այն որ ըզբեզ բու անկուսկէ բարձրացոյց,
Ի՞նչպէս հրմար որ դարերով սուրբ ու կուսանք գերբնիւր
Քու ոտքերուդ ջերմ համբոյրներ դրոշմէին ծրնաղի՛ր:

22 Յուլիս (Ն. Տ.) 1912

Ո. Կ. Մ.

Յօժարութեամբ կը հրաւիրուէին մեզ դիմումներ հետեւեալ շաբաթը :

Խմբագր .

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Երբ Օսմ. Սահմանադրութիւնը հռչակուեցաւ 1908ին, Բարձրագոյն Դուռը ժողովրդական դիմումին վրայ չատ մը գաւառական ապիկար պետական պաշտօնատար պաշտօնանկ ըրաւ : Տրապիզոնի վայրի Ֆէրիտ փաշա, որ մասնաւորապէս իր Պիթիսի կուսակալութեան օրով կեղեքած էր խեղճ հայերը, ամբողջ Տրապիզոնցիներու միաբան պահանջումով իր պաշտօնէն ձեռնթափ կ'ըլլայ և ամօթահար կը մեկնի Պոլիսի մեծ ուրախութիւն ժողովրդեան :

Ճիշդ այդ օրերուն է, որ կը սկսի Տրապիզոնի Կաթողիկէ Հայերէ ոմանց մէջ խլրտում մը իրենց օրինաւոր վիճակաւոր հանգուցեալ Ստեփանոս Եպիսկոպոս Արիկեանի դէմ, որ հովուական այցելութեան գացած էր Սամսոն, Հաւլզա, Մարգուան և Ամասիա : Այս անիրաւ խլրտումը տակաւ առ տակաւ կազմակերպուած շարժումի մը կը փոխուի, որ կրնար ծանր հետեւանքներ ունենալ եթէ ժամանակին առաջըը չառնուէր :

Արիկեան Գերապայծառ իրաց ցաւալի վիճակը իմացածին պէս ընդ փոյթ կը վերադառնայ Տրապիզոն և Եպիսկոպոսարան իջեւանելով կը սկսի իր հոգեւոր գործերը շարունակել : Դժբախտաբար սակայն այս վերադարձը փոխանակ մեղմացնելու հակառակորդներու սխալ ընթացքը, ա'լ աւելի կը սաստկացնէ, այն աստիճան որ օր մըն ալ յանկարծ խուռն խուռան մը կը պաշարէ Եպիսկոպոսարանը և կը պահանջէ Արիկեան Եպիսկոպոսի հրաժարումը ու անմիջական մեկնումը քաղաքէն :

Խեղճ Եպիսկոպոսը յանկարծակիի եկած կը շուարի, պարտականութեան ձայնը չի ներեր որ մոլորեալ անպատասխանատու խռովանի մը կամքին հպատակի և թողու այն Աթոռը՝ որուն հետ պսակուած է Ս. Եկեղեցւոյ որոշ ու մեկին կանոնաց համաձայն : Ամբոխը հետզհետէ կը բորբոքի այն աստիճան որ Արիկեան Գերապայծառ քանի մը խոհական անձանց խօսքին անսալով կը մեկնի առժամապէս Եպիսկոպոսարանէն և կը հիւրընկալուի մեծ պատուով Գաղղիացի Ֆրէրներու վարժարանը :

Ի՞նչ էր այս ամօթալի ընթացքին պատճառ :

Արհ. Յովհաննէս Եպիս. Նազլեանի նախորդը ո'չ ապաքէն ընտրուած էր ընկալեալ սովորութեան համաձայն, ժողովուրդը ստուար ձայնով տուած էր իր բարի վկայութիւնը, զինքը առաջին անգամ ընդունած էր մեծ պատիւներով ու հանդէսներով . 1903էն ի վեր կը հովուէր իր հօտը հանդարտ ու խաղաղիկ, Պետական Պէրաթն ալ իրեն չէր պակուէր, ապա ուրեմն ի՞նչ էր պատճառը : Բայց ամբոխային տրամաբանութիւնը պէտք չունի անպատճառ բանաւոր շարժառիթի՝ գրգռուե-

լու համար, կարելի է զայն շահագործել դիւրին պայմաններով և այս շարժման դրդիչները գտած էին պատրուակ մը. կ'ըսէին թէ «Արիկեան Գերապայծառ անկարող էր Սահմանադրական այս շրջանին ժողովուրդին օգտակար ըլլալ, որ պէտք ունէր նոր գաղափարներով ազատական պետի մը»: Մինչ իրականութեան մէջ միակ պատճառն էր ըստ այս եղանակներուն կարգ մը աններելի զեղծումներու վերջ տալ ուզելը: «Կաթողիկէ Արձագանգ»ի յարգելի ընթերցողները թող չդատապարտեն ըստ Ծրարիզմիցիները անխտիր, անոնց մեծամասնութիւնը ոչ թէ միայն համակիր չէր հակաեպիսկոպոսական շարժումին այլ նոյնիսկ կը դատապարտէր զայն, գիտնալով որ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ հրեք ներելի չէ օրինաւոր եկեղեցական իշխանութեան դէմ մաքառիլ:

Պոլսահայ մամուլը այս խնդրոյն մէջ ալ, ըստ իր բարի սովորութեան, կը հրատարակէ ինչ որ կը շրջուի իրեն Արիկեան Գերապայծառի դէմ, մինչ կը լռէ, չի հրատարակեր շատ մը յօդուածներ ի նպաստ եպիսկոպոսին գրուած ...

Ամիսներ կ'անցնին այս ողբալի վիճակին մէջ, մինչև որ կուսակալի օգնական Իպրահիմ Պէյ Սուսա կ'իմանայ, կը քննէ, կը դատէ վէճը և ինքը հրօնքով կաթողիկէ ըլլալուն՝ մեծապէս կը ցաւի, ու կ'աշխատի օր առաջ վերջ տալու պատահած անկանոնութեան. կ'այցելէ տարագրեալ եպիսկոպոսին և կը մխիթարէ զայն, կը դիմէ հակառակորդներու գլխաւորներուն և կը պատասխանէ անոնց պատճառաբանութեանց, կը խրատէ, կը սաստէ իսկ ի հարկին, և կը յայտարարէ իրենց թէ եպիսկոպոսարանը միայն օրինաւոր եպիսկոպոսին իրաւասութեան տակ կրնայ գտնուիլ և թէ իրենք իրաւունք չունենալով եպիսկոպոսը իր բնակարանէն վտարելու. ինք պիտի երթայ և զինքը իր Աթոռը պիտի առաջնորդէ: Արիկեան Գերապայծառ կուգայ և ուղղակի եպիսկոպոսարան կը մտնէ, հոն ամէնէն առաջ Իպրահիմ Պէյ Սուսա իր Ս. Աջը կը համբուրէ և հայրապետական օրհնութիւն կը հայցէ, իրմէ վերջ հաւատացեալներ երամ երամ կու գան և պէտք եղած պարտ ու պատշաճ յարգանքը կը մատուցանեն և կը հասկցուի թէ հակառակորդները շատ քիչեր էին և թէ մոլորեցուցեր էին տգէտ ռամիկ դասակարգը:

Իպրահիմ Պէյ Սուսայի այս գովելի միջամտութիւնը գոգցես իրեն համար ալ օգտակար կ'ըլլայ. պաշտօնի բարձրացում կ'ունենայ և յաջորդաբար Կիւմիւլիանէի կառավարիչ, յետոյ Արքիպիսկոպոսի կուսակալ, վերջն ալ հեռագրական և թղթատարական նախարար կ'անուանուի: Ահա թէ ի՞նչ թանկագին ծառայութիւն կը մատուցանէ Հայ Կաթողիկէ նուիրապետութեան՝ Սուրիացի Կաթողիկէ պետական պաշտօնատար մը, իսկ հիմայ ի՞նչ կ'ընեն անունով միայն Հայ Կաթողիկէ պաշտօնատարներ...

«Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ»

Պ. Ա.

ՄԱՐԴԱՊԻԹԵԱՆ ՓԱՌՔԵՐԸ

ԵՂԻՍԱՔԵՐ ՍԻՂՐՆ

Բ.

1794 Յունուար 6ին ամուսնացաւ երիտասարդ և մեծահարուստ վաճառականի մը հետ, Ուիլհելմ Մաճի Սիգլըն: Մարդկօրէն մտածելով՝ ամեն երջանկութիւն կը թուէր խոստանալ սոյն ամենայարմար ամուսնութիւնն: Երկուստեք բնածին ազնուութիւն, կրթութիւն, խնամեալ դաստիարակութիւն, ներդաշնակութիւն նկարագրի և ճաշակաց, սէր և համակրութիւն, փոխադարձ յարգանք՝ հիմնուած ո՛չ եթէ դիւրաթարշաժ ձիրքերու, այլ հաստատուն բարեմասնութեանց և հզօր առաքինութեանց վրայ:

Բայց նախասահմանեալ հոգիներու բաժինն է խաչը. պէտք է հանդիպիլ անոր ուշ կամ կանուխ. գրկել ու համբուրել զայն, զնեղ իւր ուսոյ վրայ և բարձրանալ դէպ ի Գողգոթա, հասնելու համար ապա յիդեմն հրճուանաց, ի հայրենիս անանց երջանկութեան: Այո՛, ամեն ոք ունի յաստիս իւր Գողգոթան, և երանի՛ անոր որ չղայրանար, չապստամբիր անոր դէմ: Սակայն տառապիլ լով՝ չբաւեր. սուրբն ու ոճրագործը կրնան հաւասարապէս տառապիլ, բայց մին եւս քան զեւս կը նմանի իսաչեցեալ Փրկչին, ու միւսն անիծեալ դատապարտելոյն: Ինչ որ սուրբին յառաջ կը բերէ, և դիւցազնութեան կը բարձրացնէ զմարդիկ՝ խոնարհ համակերպութիւն, սիրալիր ու յօժարամիտ տառապանքն է այն:

Անգլեւամերիկեան պատերազմին հետեւանօք Պարոն Սիգլընի առեւտուրն մեծագոյն վնասներու ենթարկուեցաւ. և յետոյ 1804ին սոյն նիւթական վնասուն վրայ աւելցան նաեւ բարոյական մտատանջութիւնք և ֆիզիքական ցաւեր: Անողոք հիւանդութեան մը նշաններուն առջև բժիշկները խորհուրդ տուին նմա մեկնիլ դէպ ի մեղմագոյն կլիմայ մը: Պ. Սիգլըն Իտալիոյ գեղեցիկ քաղաքներէն միոյն մէջ ունենալով երկու ազնիւ բարեկամներ, Փիլիպպոս և Անտոն Ֆիլիպպի, — տիպարք վեհանձնութեան և կրօնասիրութեան, — որոց հետ կը մշակէր առեւտրական յարաբերութիւններ տարիներէ ի վեր, որոշեց խնդրել անոնց ասպնջականութիւնը. և նոյն տարւոյ վերջերը մեկնեցաւ Նիւ-Յօրքէն իւր կնոջ և անչրանիկ դստեր Աննայի հետ: Երկար և տաժանելի ուղեւորութենէ մը վերջ, երբ այն ինչ կ'ուրախանային ի տես Իտալիոյ գեղածիժաղ ափանց, ահա յանկարծ դեղին ջերմի պատճառաւ կ'ստիպուին քառասնօրեայ արգելան ընել անխնամ ու ողորմելի զգուշարանի մը (lazaret) մէջ ի Լիվուռնօ: Երիտասարդ ամուսնոյն հիւանդութիւնն օր

քան զոր կը յառաջանայ զգալապէս, օգտփոխութենէ ակնկալեալ բա-
րիքներն չեն երեւիր բնաւ: տարաբաղդ ընտանիքը կը կարօտի ամենա-
փափուկ խնամոց, մինչդեռ այդ դժուար յարկին ներքեւ զուրկ են յա-
ճախ կեանքի ամենէն տարրական պիտոյքներէն անգամ: Երբ մտածենք
թէ ինչպիսի ճոխ ու փարթամ կեանքի կը յաջորդէ սոյն անակնկալ
կարօտութիւնը, լքումն օտար երկրի մէջ, ու գրեթէ թշուառութիւնն
ազեկէզ, իրօք կարելի չի նիր տեսնել առանց արցունքի այդ առաքինի
անձանց ներքին տագնապն ու չարչարանքներն անբացատրելի: Բայց
եթէ մեծ է յուզումն, աւելի մեծ է շինութիւնը. դժգոհութեան և տըր-
տունջի բառ մը չստեղծ ընաւ: Բնութիւնը կը ցնցուի, կը սոսկայ. բայց
առաքինութիւնը կը տիրէ, ու կը հրամայէ ցաւոց, և զԱստուած չվըշ-
տաղնելու փափազն յանձնառու կը լինի ամենայնի: Երիտասարդ հիւանդն
ամեն օր նոր սիտիանք կը գտնէ իւր հաւատարիմ կնոջ քաջասիրտ անձ-
նանութիւնէն մէջ. ժրագլուխ կիսն յարատե ու ջերմեռանդն աղօ-
թից մէջ անսպառ ոյժ կը քաղէ չընկճելու համար անպասոււմ վշտի մը
ժանրութեան ներքեւ: Վերջապէս 19 Դեկտեմբերի կը մեկնին զգուշա-
րանէն, և կառքը կուգայ զաննք փոխադրել Ֆիլիպքի գերդաստանին
բնակարանը, ուր նոյն ամսոյ 27ին կը մեռնի Պ. Սիդրն ծաղիկ հասակի
մէջ՝ թողլով հինգ որբեր դեռատի, որոց մին և եթ՝ Աննա, կը գտնուի
ի Լիվուռնօ, և կ'աղօթէ իւր վաղամեռիկ հօր գերեզմանին վրայ, իսկ
միւսները կը գտնուին ի Նիւ-Եորք իրենց ազգականներու մօտ: ՀԵՐՄԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌԱՄ

Վախճանեցաւ Հռովմայ Եկեղեցւոյ Կարդինալ Ֆիշէր, Արքեպիսկոպոս Գօլոնիոյ, Ենած
էր 30 Մայիս 1840, և ուսմունքը կատարած ի Համալսարանին Պոնայ Էսպրնի մէջ քսան
տարի պաշտօնավարեց իբրեւ ուսուցիչ և շահեցաւ ընդհանուր համարում ոչ միայն իբր
աստուածաբան, այլ իբրեւ քաջ յունագէտ և մատենագիր կաթողիկէայ: Ենորհիւ իւր խո-
րունկ գիտութեան ու գործունէութեան է որ արժանացաւ Կարդ. Բրէմէնցի ուշադրութեան,
որ զՖիշէր խնդրեց և ընդունեցաւ իբր Օգնական Եպիսկոպոս, տիտղոսով Յուլիոպոլիս, ի 14
փետր. ի 1889: Զանգիպարի մէջ նոր աւան մը, ի պատիւ իրեն, անուն ստացաւ «Ֆիշ-
էր Եթատ», ի յիշատակ այս գաւառին Առ. Փոխանորդն ինք ձեռնադրած ըլլալուն:
1903ին երբ Երջանկայ. Լեոն ԺԳ. բարձրացուց զինքը Գօլոնիոյ Արքեպիսկոպոսական աթո-
ռին վրայ, 22 Յունիսի Կարդինալաժողովին մէջ շնորհեց անոր նաև Կարդինալական Երան-
ւոյ պատիւը: Մեծ է կորուստը Գօլոնիոյ աթոռին:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ամեն. Հոգեւոր Տէրն՝ Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետին գահակալութեան տա-
րեդարձը շնորհաւորելու համար հեռագիր տուած ըլլալով, ուրախ ենք հոս արձանագրելու
երեկ Վսեմ. Կարդ. Մերի տէլ Վալի կողմանէ եկած պատասխան հեռագիրը:

Հռոմ, 14 Օգոս. 1912

Ամենապ. Թեոգիեան Պատրիարք

ի Բերա Կ. Պոլսոյ

Սրբազան Հայրը որսողին շնորհակալութիւն կը յայտնէ Ձերդ Ամեն. Տէրութեան
այն որդիական յարգանքալիլ շնորհաւորութիւններուն համար, զոր իրեն ուղղած էք. և ի
բոլոր սրտէ կը շնորհէ Ձեզ և Պատրիարքութեանդ ամբողջ հաւատացեալներուն, իւր Առա-
քելական օրհնութիւնները:

Կարդինալ Մերի տէլ Վալ

* Կեսարիոյ Նախկինպոս Արհի. Անտոն Գեր. Պահապանեան տննական գործոցը կարգադրութեանը համար գնացեր է յԱնկիրիա:

* Անցեալ Երկուշաբթի Սրբուհւոյն Նւգինէի յիշատակութեան առթիւ Ա. Յ. Կուսանաց Ընդհ. Մեծաւոր Մօր Բ. Նւգինէ Բէքմէգեանի անուան տօնն ըլլալով. Բերայի Մայր Վանքին մէջ սիրուն հանդէսներ սարքեցին Մայրապետները. Առաւօտուն Արհի. Փոխանորդ Արք. Յովսէփ Գեր. Ռօգոսեան Չայնաւոր Պատարագ մատոյց իրենց Մատրան մէջ և խօսեցաւ գեղեցիկ յորդորական մը ըստ աւուր պատշաճի. Ներկայ էին Արհի. Աւետիս Արք. Արփիարեան՝ Նպս. Մարաշու և քանի մը քահանայք: Յետոյ մեծ սրահին մէջ շնորհաւորութիւններ կատարուեցան: Այս առթիւ մասնաւոր պատուիրակութիւններ զրկած էին Որբանոցի և շրջակայ գիւղերու մէջ հաստատուած նոյն կարգի կուսանաց տունները, և դուրսի առաքելութիւններէն բազմաթիւ նամակներ և հեռագիրներ հասած: Մեր այ տնկեղծ շնորհաւորութիւնները:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Ալպանիա. Ետեւ ետեւ եկած հեռագիրներէն ու տեղեկագիրներէն յայտնի կը տեսնուի որ Ալպանիոյ դէպքերը կը դիմեն բարւոքումի, այնպէս որ կարելի է այլեւ յուսալ որ նորակազմ Մեծ Դահլիճին կամ Սաարազմներու Դահլիճին իմաստուն վարչութեան շնորհիւ Ալպանիա այլ եւս հիմնական կերպով պիտի խաղաղի, պիտի ստանայ այնքան ժամանակներէ ի վեր ի դուր փնտռած և արիւն թափած բարենորոգումները, որոնք հնար է նաև Փոքր Ասիոյ հեծող Ներքին դաւաճներուն համար նախանկար օրինակ հանդիսանան — բարենորոգումներու որոնք պետութեան ներքին խաղաղութեան համար այլ ևս իրականացեսան հրաժեշտ դարձած են:

* Ալպանացիք Սկիւպի վրայ ըլլալիք յարձակումէ վերջնաբար ետ կեցած են, երբ լսեցին Երեսփ. Ժողովոյ լուծումը որ Ալպանիոյ ամէն կողմ խանդավառ խրախմանութիւններու առթիւ եղաւ: Շքտարայէն առնուած լուրերու նայելով, Մալիսորները Երեսփ. Ժողովին լուծման լուրը առնելով իսկոյն փոխեր են իրենց ընթացքը, նաև որոշեր են Սև Լեռնեցիներուն ոչ թէ բարեկամ ու հաւատարիմ ըլլալ, այլ անոնց դէմ բուռն թշնամութիւն ցոյց տալ, հարբենիքը պաշտպանել և դուրսէն ըլլալիք ամէն տեսակ յարձակումներու դիմադրել:

* Սէլանիկի մէջ պաշարման վիճակ. — Կառավարութիւնը ինչպէս երեկ ծանուցիմք՝ ծանուցած պիտի մը փայ Սելանիկի ֆաղափն ու շրջականերուն մէջ պաշարման վիճակ հրասարակեց կարճ միջոցի համար: Պաշարման վիճակը հրամայող Կայս. Իրատէն կ'ըսէ. — Ներքին գործոց նախարար արտօնուած է նաև ի հատկին պաշարման վիճակ հրասարակել Դոսովայի, Մանասլուի, Նանեայի, Այսընի ու Էսիլնիկի նահանգաց մէջ:

* Ներքին զաւոց նախարարին հրաժարականը. Ներքին գործոց նախարար Զիւս փաշա, առողջական պատճառաւ, երէկ իր հրաժարականը մատոյց վարչապետին, որ վայն ընդունեց: Տակաւին իր յաջորդին ընտրութեան համար " և է որոշում արուած չէ:

* Գերման դեսպանը Կայսեր կը ներկայանայ. Գերման նոր դեսպան Պաուս Ֆոն Վանկէնհայմ երեկ հանդիսաւոր կերպով Կայս. պալատ գնաց և պաշտօնապէս ընդունուեցաւ: Սուլթանէն Արտաքին գործոց նախարար Դարբիէ Էֆ. Նորատունկեան՝ դեսպանը Ներկայացուց Կայսեր և թարգմանի պաշտօն կատարեց: Պաուս Ֆոն Վանկէնհայմ իր յանձնարարագիրները մատուցանելով ճառ մը արտասանեց, ըսելով որ ամէն կերպով պիտի աշխատի ամրապնդելու երկու երկիրներուն միջև եղած բարեկամական բարւոք յարաբերութիւնները: Սուլթանը պատասխանեց միեւնոյն իմաստով: Յետոյ դեսպանը մեկնեցաւ:

* Իթիթհատական կատարի թերթեր, Թանիկ և Հազզ ինքնաբերաբար դադրեցուցին իրենց հրատարակութիւնը:

* Կառավարութիւնը զինուորական սպաներու կը պարտաւորէ ընաւ քաղաքականութեամբ չի զբաղելու համար երդում ընել: Նոյնպէս կառավարական պաշտօնեաները կը պարտաւորէ " և է քաղաքական կուսակցութեան չպատկանելու համար գրաւոր հաւատարմիք տալ. եթէ չտայ կամ ապա դժէ պիտի հանուի պաշտօնէն: Ահա այսպէս կը մաքրուին պաշտօնատուները անարժան կուսակցականներէ և կ'ապահովուի անգործութիւնը:

ԵՐԿՐԱՆԱԲԻՄ Բնութեան ահաւոր աղէտներէն մէկն եղող երկրաշարժը իր ամէն գարհուրանքով գործեց ամսոյ 26—27 գիշերն առաւօտեան դէմ ժամը երեքուկէսին Լ. Ե. Պոլիս զգացուած շարժումը արտաքոյ կարգի զօրաւոր էր, կրկին ցնցումներով, առաջինը 8

իսկ երկրորդը 18 երկվայրկեան տեւողութեամբ Ամրող քաղաքը, չընկալիւնքն հանդերձ, ահաւոր մատնուած, տներէն դուրս խուժեց, յիշելով անցեալ աղէտները մանաւանդ 1895ին: Բայց բարեբախտաբար ո՛չ անձի և ո՛չ ալ նշանակելի նիւթական կորուստ մը պատահեցաւ: պատճառն այն էր որ տատանումը հորիզոնական եղաւ և ոչ ուղղանկիզ վարէն վեր: Սակայն ո՛չ այսպէս և Մարմարայի եւրոպական եղերքը և հինն թրակիոյ ընդարձակութեան մէջ: Հոն բացարձակապէս զարհուրելի եղած է աղէտը, քաղաքներ, գիւղեր ամբողջովին կործանած կամ հրոյ ճարակ եղած, հազարաւոր մարդկային զոհերով, նիւթական անբաւ կորուստներով, աղետարշ տեսարաններ կը պարզուին ամէնուրեք: Հազարներով են վերաւոր ու մեռած, անդադար վերաւորներ կը փոխադրուին ի Կ. Պոլիս երկրաշարժին աւեր գործած տեղն է գլխաւորաբար Մարմարայի վարի աւազանը, եւրոպական կողմը կէ- լիպօլուէն մինչև ցՍիլիվրի և ներսերը մինչև ցՍիտոսթօ, Զօրլու, Տէմէթոքս, Էտիրնէ և Նոյն իսկ մինչև ցՍիլիպէ, Ատիական եղերքէն Տարտանելէն մինչև ցՊանարմա, և ինչ. երկրաշարժի բուն կեդրոնը եղող Միւրէֆթէ քաղաքին մէջ երկրաշարժի ցնցումներուն հետ հրդեհ ալ առաջ եկած է, որու հետեւանքով յիշեալ քաղաքին հետ Խօրա, Բէրէսթէ և Միլա գիւղերը բոլորովին այրած են: Կանո-Պալաթունա գիւղերը Նոյն աղէտին ենթարկուած և հրոյ ճարակ եղած են: Հեռագրական հաղորդակցութիւնք խզուած են: 15,000 արկածեալներ անընակ և անօգնական մնացած են:

* Միւրէֆթէի յունաց վարժարանին ուսուցիչը, որ աղէտէն հրաշքով ազատուած է, հետեւեալ կերպով կը պատմէ աղէտը. — Երկրաշարժը տակալի ցնցումներով 25-30 երկ- վայրկեան տեւեց և գիւղին 1200 տունները հողին ու փլատակներուն տակ թաղեց: Միայն 30 տուններ ազատեցան: Բազմաթիւ ժողովուրդ վիրաւորուեցան ու մեռան: Միայն Միւրէֆթէի ու չընկալիւնքն մէջ 1000էն 1200 մեռած և վիրաւոր կան: Բէրիսթափ գիւղին 700 տունէն 30-40 տուն մնացին, Մթէրնայի 2000 տունին կէսը փլած են: Գալլամելի 1600 տունէն 50-60ը, փլան, Թանոցի 500 տունէն 20, Բէրասեանի 400 տունէն 20ը միայն աւ- ղատուած են: Երկրաշարժի պահուն կանթեղ մը չընկելով հրդեհ ծագեցաւ և ծաւալելով տա- սը տեղէն այրել սկսաւ: Հրչէջ գործիքներ պակսելուն և ամէն մարդ շուրաւած ըլլալուն կա- ռելի չեղաւ: հրդեհին առաջըր առնելու Խօրա գիւղը ամբողջովին այրեցաւ:

* Միւրէֆթէէն սրտաճմիրի դէպքերու լուրեր կը հասնին: Միւրէֆթին իր ամբողջ բնամեքովը կորսուած է: Կը կարծուի որ շատ մարդիկ ողջ ողջ կը մնան հողին տակը: Դործիք չկայ որ խեղճ զոհերը աղատուին:

* Էվլաքի նախարար. Նախարարաց խորհուրդը զբաղեցաւ նաև վերջին երկրա- շարժին և հրդեհներուն առաջ բերած աղէտներու խնդրով և Էվլաքի նախարար Ահմէտ Ֆէվզի փաշայի նախագահութեան տակ յանձնաժողով մը կազմեց և անոր պաշտօն յանձ- նեց պատիւ ամբողջ արկածեալ վայրերը և ստուգել անձի, ինչքի կորուստները, և յետոյ արկածեալներու հարկ եղած օգնութիւնները փութացնելու համար անձամբ հրահանգներ տալ տեղական իշխանութեանց և միջոցներ ի գործ դնել կարելի եղածին չափ պատասխա- րելու համար արկածեալները: Նախարարաց խորհուրդը առայժմ անմիջական պէտքերու ծախսուելու համար յանձնաժողովին տրամադրութեան տակ դրաւ 150,000 դրուշ: Այս յանձնաժողովը Պէզըր Ալէմ շոգենաւով մեկնեցաւ Կէլիպօլու, ուր պիտի ձեռնարկէ պաշ- տօնին: Յանձնաժողովին կը մասնակցին նաև քաղաքային քննիչ Հայտար պէյ, բժիշկ- ներ, գեղադարձներ, հիւանդապահներ, ոստիկան զինուորներ, ոստիկաններ: Շօգենաւը կը տանի նաև վրան, բժշկական պիտոյքներ, ուսեստ, ալիւր, ևն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Օնուհնր Պիոս Փափա հագրէքիւի	433
Իմաստութեան սկզբանց վրայ բաղդական	438
Հնչեակ	442
Յանձնարարելի օրինակ մը	443
Մարդկութեան փառներ	445
Տեղեկագրական	446

ԱՐՏՕՆԱՏԼՐ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԵՆ-ԽՐԱԳԻՐԱԴԵՏ
ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Հնկ. Էպուսուուտ ճաշէսի Նօ. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ» . Հայ Կաթողիկէ Ի Պատրիարքարան
պատշոնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ
ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառոտ-
ուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիսեկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը յճարուին *Մանսա-Բոսնով* եւ
կամ մէյ մէկ դր.նոց նամակադրուով :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ , յօդուած , եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcate Arménien Catholique
Péra Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ
հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Ցօղուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ
կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկնատրուին: